ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/15» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ
ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

20 -ը նոյեմբերի 2019թ.
Ժամը 11[00]

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի պետ Ա. Նազարյան,

գնահատողներ՝

ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության ՆՏԱ բաժանմունքի պետ, բ/ծ փոխգնդապետ Վ. Վահանյան,

ՀՀ ՊՆ ՎՀՄԲԿ բժիշկ Գ. Անտոնյան,

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Հ. Ավետիսյան,

Հանձնաժողովի քարտուղար՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, Ա. Մաղաքյանը:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/15» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1. Մասնակիցների՝ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1.1 ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն առաջին տեղ զբաղեցրած մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, իսկ կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով հանձնաժողովի կողմից չի գնահատվել:

1.2 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված պահանջներին ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/15» համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

1.3 Ընդունել ի գիտություն՝ 1-ին չափաբաժնի մասով **«Գլոբմեդ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված տեխնիկական բնութագրի գնահատումն իրականացնելիս, գնահատող հանձնաժողովը հիմք է ընդունել պատասխանատու ստորաբաժանման կողմից 19.11.2019թ. ելք 19/2715 գրությամբ ներկայացված մասնագիտական եզրակացությունը:

1.4 Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների հրավերով պահանջվող փաստաթղթերը և ներկայացված տեխնիկական բնութագրերը գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին և «Գլոբմեդ» ՍՊԸ 1-ին և 4-րդ չափաբաժինների մասով, իսկ 3-րդ չափաբաժնի մասով «Մարգ-Ֆարմացիա» ՍՊԸ-ին հայտարարել ընտրված (հաղթող) մասնակից: Քանի որ սույն ընթացակարգի շրջանակում յուրաքանչուր չափաբաժնի մասով հայտ էր ներկայացրել միայն մեկ մասնակից, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը անգործության ժամկետ չկիրառել և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.5 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/15» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/15» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Ա. Նազարյան
Գնահատող	Վ. Վահանյան
Գնահատող	Գ. Անտոնյան
Գնահատող	Հ. Ավետիսյան
Հանձնաժողովի քարտուղար	Ա. Մաղաքյան